Դ. ՏԱՐԻ ԹԻՒ 1050 — ԵՐԿՈՒՇԱԲԹԻ 6 ՅՈՒԼԻՍ 1887 (Ն. Տ.) 18 ՅՈՒԼԻՍ 1887 — 27 ՇԻՎՎԱԼ 1304

20 ՓԱՐԱ (ՁՆՈՐ ՏՆՕՐԻՆՈՒԹԻՒՆ)

ԱՐԵՒԵԼՔ

ՕՐԱԳԻՐ

ԴՈՒՂ ԱՊՍԱՒՆ ԵՒ ՍՂԳԱՅԻՆ

20 ՓԱՐԱ (ՁՆՈՐ ՏՆՕՐԻՆՈՒԹԻՒՆ)

ԳՆԱԺԱՆԵՐԴԱՏԱՐՈՒԹԻՒՆ

կ. Պոլսոյ Համար Տարեկան դահեկան արծաթ 160
» » Վեցամսեայ » » 80
» » Եռամսեայ » » 40
Գաւառաց » Իւ տեղական
Թղթատարով տարեկան » » 240
Գաւառաց Համար եւ տեղական
Թղթատարով վեցամսեայ » » 120
Օտար երկիրներ, տարեկան ֆրանք 58
» » վեցամսեայ » 26

Դուրս ղրկուած լրագրաց Համար ծախքը Տնօրէնութեան վրայ է, Համաձայնութեամբ ղրկուած Համարկ կամ գրութիւն հա չպարտիր.

Les annonces sont reçues à l'Eastern Agency place Karakeuy Deïrmen Han Co stantinople

Direction du journal AREVELK
Noradounghian Han, Galata
CONSTANTINOPLE

Կ. ՊՈԼԻՍ, 6 ՅՈՒԼԻՍ, 1887

ԱՋԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԻՆՉՈՒ՞ ՉԵՆ ԿԱՐԳՈՒԻՐ

(*)

Ամուսնական խնդրոյն վրայ խօսելով, անկարելի է ուշադրութենէ վրիպեցնել Դրամօժիտն, այսինքն Դբախոյն, որուն համար ըսինք մեր վերջին յօդուածով թէ ուրոյն քննութիւն մը կը պահանջէ.

Այս քանի մը յօդուածները նուիրելով ամուսնական խնդիրներու, մեր առաջադրութիւնն եղած է ցոյց տալ թէ կ. Պոլսոյ մէջ ամուսնութեանց նուազութիւնը կախում ունի ընկերային և տնտեսական այնպիսի ընդհանուր պայմաններէ, որոց ամենամեծ մասին վրայ իշխանութիւն կամ ազդեցութիւն չի կրնար ունենալ Պատրիարքարանն.

Այն նիւթական և բարոյական արգելքները զորս նշանակեցինք նախորեակ յօդուածներով, բան բաւականին ցոյց տուին՝ կարծենք՝ թէ ո՛ր աստիճան հիմնաւոր է այս տեսութիւն.

Դրամօժիտն ալ անոնց կարգէն է. Դրամօժիտն ալ՝ դէշ կամ աղէկ՝ ժամանակին բերմունքն է, եւ թէպէտ Պատրիարքարանը բազմիցս փորձած է արգիլել դրամօժիտը, բայց ասով ամուսնութիւնը չեն չափած, կամ դրամօժիտ առնող երիտասարդներն ևս չեն կեցած իրենց մտադրութենէն.

Տ. Յակոբոս Պատրիարքին օրով, լաւ չենք յիշեր ո՛ր տարին, Գերագոյն ժողովը, Հոգեւոր ժողովոյն հետ համաձայնութեամբ, որոշեց եւ վճռեց թէ դրամօժիտը դատապարտելի է, և եկեղեցւոյ մէջ Երկաբեռական կարգադրելով, արդիւնց բացարձակապէս.

Նոյն Գեր. և Հոգ. ժողովք, նոյն նստի մէջ, ինկատ առնելով Ս. Ծննդեան և Ս. Զատկի տօներուն առթիւ այցելութեանց և ընդունելութեանց պատճառած ընտանեկան և անձնական տագնապները, դժուարութիւնները ու ծախքերը, ծանուցին եկեղեցւոյ մէջ թէ այս այցելութիւնը և այս ընդունելութիւնը պարտաւորիչ չեն, և թէ ներելի և կարելի է չափաւորել կամ դադրեցնել զանոնք.

Բայց ինչպէս այս որոշման ու ծանուցման թուականէն իբր 35 տարի յետոյ, Ս. Ծննդեան և Ս. Զատկի այցելութիւնը աւելի քան երբեք պարտաւորիչ կը համարուին ընկերութեան ամէն դասերուն մէջ, դրամօժիտն ալ այսօր 35 տարի առաջուընէ չատ աւելի կիրառութիւն ունի ամուսնութեանց մէջ.

Զգիտենք թէ Ս. Ծննդեան եւ Ս. Զատկի այցելութիւններն արգիլելու համար կեդրոնական ինչ միջոց ձեռնարկուեցաւ, և ինչ հետեւանք կ'ունենայ այժմ իսկ.—

Աղջիկները դրամօժտով կը կարգուին աւելի քան երբեք. Բայց կը պատահի որ բախտախնդիր երիտասարդին մէկը կարգուած կը լինի դրամին համար միայն, և դրամն սպառելէ յետոյ, կը ճանաչէ խեղճ կինն, որոյ թերեւս միակ հարստութիւնն էր ինչ որ ամուսնոյն բերած էր իբրեւ դրամօժիտ. կինը կը բողոքէ ի Պատրիարքարան, և ազգային իշխանութիւնը, «դրախօյն դատ մտիկ չեմ ըներ» ըսելով, անպաշտպան և անօգնական կը թողու խեղճ կինն, և անպատիժ կարձակուի տմարդի արն.

Իսկ Ը՞նչ ինչ կ'ընեն, Ինչպէս մեր, Ըունեց ալ «եկեղեցական և ազգային հին աւանդութեանց» անչուշտ հետաքրքիր է դրամօժիտը. Բայց նոքա, մեզմէ աւելի իմաստուն, երբեւ իրողութիւնը կը ճանչեն դրամօժտին դուրս, որովհետեւ ամէն տագնապ ունին... կատարեա՛լ է... ամուսնական նորատարազ ընկերակցութեան. Ա.յս բաժինը, դրամօժիտը, կ'ինն ետ կ'առնու, երբ առանց իւր կողմէ յանցանքի մը ամուսնական բաժանում կամ ամուսնալուծում տեղի ունենայ.

Ուրեմն, դրամօժիտը պայմանապէս ճանչուած և օրինադրուած է թէ Ըուեցաց և թէ ամէն Եւրոպացի ազգաց մէջ. Մեր մէջ ալ բաւական ընդհանրացած սովորութիւն մ'է այս. Փորձառութիւնը ցուցած է թէ դրամօժիտը վճռական դեր մը չունի ընտանեկան հաստատութեան մէջ. Մեր ամենաբախտաւոր ամուսնութիւնները, որոց դէմ անպայման կը թողու չատ մը դէռատի, միամիտ կիներ, որը փալուն ձեւերէ հրապուրուած, իրենց անձին հետ մէկտեղ, իրենց կամ ծնողաց խնայութեան արդիւնքն ևղող գումար մը յանձնած էին իրենց ամուսնոց.

Եւ ինչպէս Պատրիարքարանը պարտի ճանչնալ դրամօժիտն իբրեւ իրողութիւն մը որ սերտ առնչութիւն ունի հայ ընկերական կենաց հետ, մեզ կը թուի թէ խղճամիտ և որդեսէր հայր մը հեռատեսութեամբ վարուած չի լինիր եթէ՝ Պատրիարքարանի դրած կամ դնելիք այդելքներուն վրայ հիմնուելով՝ բոլորովին անհոգ վարուի իւր աղջկան դրամօժտին նկատմամբ. Շատ պարկեշտ և աչքատեսէր երիտասարդներ կարգուած են առանց դրամօժտի, բայց ուրիշներ ալ, ո՛չ նըշաւոյ պարկեշտ և աչքատեսէր, կարգուած են և կը կարգուին դրամօժտով. Իւր աղջիկն ամուսնացնել վարձող հայր մը պէտք է կարող լինի ընտրութիւն ընելու այս Թէ՛ առաջին և Թէ երկրորդ կարգի երիտասարդաց մէջէն, և յանժամ դիւրաւ կ'ամուսնացնէ իւր աղջիկն. եթէ որոշ ընտրութիւն ընել միայն առաջին կարգի երիտասարդներուն մէջէն, կրնայ դարձեալ իւր նպատակին հասնիլ, բայց Թերեւս ո՛չ այնչափ շուտ, և ո՛չ այնչափ ապահովապէս.

Առնք հասարակ սղմոսութեան ցոյց տուած իրողութիւններն են, ի՞նչ օգուտ ունի ուրեմն բացագանչել դրամօժտին դէմ. եթէ մեր նպատակն է ամուսնութիւնները չատցնել, պէտք է որ մեր խորհած և խորհելիք դարմաններն հիմնուին իրողութեանց վրայ, եւ ո՛չ Թէ վերացական վարդապետութեանց վրայ. Դրամօժիտն այդ իրողութեանց մին է. Ամէն մարդ կը գովէ այն երիտասարդն որ կամուսնանայ իւր ճակտին քրտամբ իրեն համար վաճառ մը ստեղծելով,

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ

Հայաստանի հանրապետութիւն

Ե՛կ. Մարտիրոսեան

Ե՛կ. Մարտիրոսեան

Ե՛կ. Մարտիրոսեան

ԿՈՒՐՈՐՏԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ս. ԹԱԴԵՈՍԵԱՆԻ

Ա. ՀԱՏՈՐ, 16 Յուլիս/1 Օգոստոս, տարի 3 թերթ 45 էջ, գին 16 ֆրանկ

Ա. ՀԱՏՈՐ, 16 Յուլիս/1 Օգոստոս, տարի 3 թերթ 45 էջ, գին 16 ֆրանկ

Ս. ԹԱԴԵՈՍԵԱՆԻ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԳՈՒՆԱՅԻՆ ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ս. ԹԱԴԵՈՍԵԱՆԻ

Ա. ՀԱՏՈՐ, 16 Յուլիս/1 Օգոստոս, տարի 3 թերթ 45 էջ, գին 16 ֆրանկ

Ա. ՀԱՏՈՐ, 16 Յուլիս/1 Օգոստոս, տարի 3 թերթ 45 էջ, գին 16 ֆրանկ

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՆՐԱԴՐԱՄԱՏԱՐԱՆ

Հ. 1 — 1887 — 949

Տ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ ԵՒ Ա. ՊԱՐՈՆԵԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՍՏԱՑՈՂ ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐՈՒ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐՈՒ ԱՆՈՒՆՔ